ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆՄՈՒՇ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1

(նիստը գումարվել է _____ թ. սեպտեմբերի _____ -ին)

Նիստին մասնակցում են աշակերտական խորհրդի _____ անդամներից _____ ը: Բացակա՝ _____, հարգելի՝ _____ :

(արձանագրությունների սույն օրինակելի կառուցվածքը և գլխագիրը նույնն է մյուս բոլոր նիստերի համար):

Օրակարգում՝

1. Հաստատությունում ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների կատարման, առարկաների դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, կարգապահության բարելավման մասին *(զեկուցող (կամ հաղորդող)՝ _____):*

2. Հաստատությունում սովորողների արտաուսումնական, արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը հաստատության կառավարման խորհրդին ներկայացնելու մասին *(հաղորդող՝ _____):*

3. Հաստատությունում դասղեկների հետ համագործակցելու, Դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան պլանով նախատեսված միջոցառումներն իրականացնելու մասին *(հաղորդող՝ _____):*

4. Հաստատությունում սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման մասին *(հաղորդող՝ _____):*

5. Հաստատությունում սովորողների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավման մասին *(հաղորդող՝ _____):*

6. Հաստատության ներքին կարգապահական կանոնների կատարման *(կամ նախագծի հաստատման)* մասին *(հաղորդող՝ _____):*

7. Հաստատությունում սովորողների իրավունքների պաշտպանության մասին *(հաղորդող՝ _____):*

8. Հաստատությունում ծնողազուրկ և օգնության կարիք ունեցող սովորողների հաշվառմանը, նրանց նյութական օգնություն ցուցաբերելու աշխատանքների կազմակերպման ու իրականացման գործընթացին մասնակցելու մասին *(հաղորդող՝ _____):*

9. □Ուսուցման բովանդակությունը, գիտելիքների յուրացման որակը□ հարցի վերաբերյալ դպրոցի մանկավարժական խորհրդում իրականացվող քննարկմանը մասնակցելու մասին *(հաղորդող՝ _____):*

10. Հաստատության կառավարման և մանկավարժական խորհուրդներին աջակցելու մասին *(հաղորդող՝ _____):*

11. Հաստատությունում մանկապատանեկան ակումբ ստեղծելու և նրա աշխատանքների կազմակերպանը աջակցելու մասին *(հաղորդող՝ _____):*

12. Սովորողների անհատական և կոլեկտիվ առաջարկներին ու դիմումներին արձագանքելու ընթացք տալու մասին *(հաղորդող՝* _____):

13. Հաստատության և ընտանիքի կապի ամրապնդմանը աջակցելու մասին *(հաղորդող՝* _____*):*

14. Համայնքին օժանդակող ծրագրերի իրականացմանը մասնակցելու մասին *(հաղորդող՝* _____*):*

15. _____ հանրակրթական ուսումնական հաստատության աշակերտական խորհուրդների հետ կապեր հաստատելու մասին *(զեկուցող՝* _____*):*

16. Այլ հարցեր:

Օրակարգում՝

1. Հաստատությունում ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների կատարման, առարկաների դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, կարգապահության բարելավման մասին *(զեկուցող՝* _____ *):*

Լսեցին - 1. *(... գրանցել օրակարգի 1-ին հարցի բովանդակությունը և հարցը զեկուցողի կամ հաղորդողի պաշտոնը կամ դասարանը, անունը, ազգանունը):*

Զեկուցողը կամ հաղորդողը հիմնականում նշեց կամ ուշադրության արժանացրեց հետևյալը՝ ... (գրանցել զեկուցողի կամ հաղորդողի գրավոր կամ բանավոր ելույթի հիմնական մտքերը, դրույթները, տեսակետները կամ արժանահիշատակ պարբերությունները):

Արտահայտվեցին - 1. *(գրանցել արտահայտվողի պաշտոնը կամ դասարանը, կամ այլ տվյալներ, անունը, ազգանունը):*

Նա նշեց կամ կարծիք արտահայտեց, որ ... *(գրանցել արտահայտվողի հիմնական տեսակետները, կարծիքները և առաջարկությունները՝ ըստ զեկուցողի կամ հաղորդողի ելույթից բխող դրույթների էության):*

◊ Օրակարգի առաջին հարցը սպառելուց հետո օրակարգի մյուս հարցերի վերաբերյալ զեկուցողների, հաղորդողների, արտահայտվողների ելույթները գրանցել վերոգրյալ եղանակով:

◊ Օրակարգի հարցերը սպառելուց հետո գրանցել աշակերտական խորհրդի որոշումը՝ ըստ օրակարգում քննարկված հարցերի հերթականության:

◊ Օրակարգում ընդգրծված հարցերի առանձնահատկություններից ելնելով՝ հնարավոր է յուրաքանչյուր հարցի քննարկումից հետո կայացնել և գրանցել աշակերտական խորհրդի համապատասխան առանձին

ՈՐՈՇՈՒՄ:

◊ Որոշումներն ունենում են նախաբան գլխագիր, որում հստակ ձևակերպվում են աշակերտական խորհրդի որոշում կայացնելու հիմքերը, դրդապատճառները, սկզբնաղբյուրները կամ նպատակը, որով այն ձևավորվում է:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆՄՈՒՇՆԵՐ

Որոշման օրինակելի նմուշ 1

Օրակարգում՝

1. Հաստատության կառավարման, մանկավարժական և ծնողական խորհուրդներին, ինչպես նաև տնօրինությանը՝ սովորողներին անմիջականորեն վերաբերող աշխատանքներում աջակցելու մասին *(հաղորդող (կամ զեկուցող)՝ _____):*

Հաստատության կառավարման, մանկավարժական և ծնողական խորհուրդներին,
ինչպես նաև տնօրինությանը՝ սովորողներին անմիջականորեն վերաբերող աշխատանքներում աջակցելու համար աշակերտական խորհուրդը,
ղեկավարվելով
կանոնադրության 39-րդ կետի 1-ին ենթակետի* պահանջներով,
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատությունում սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորությունների ժողովրդավարության ու ինքնավարության սկզբունքներին համապատասխան գործունեություն կազմակերպելու, սովորողներին վերաբերող հարցերի մասին անմիջականորեն կոլեգիալ կառավարման և խորհրդակցական մարմիններում *(մանկավարժական, ծնողական, հոգաբարձուների խորհուրդներ և այլն)* ներկայացնելու, քննարկելու, ինչպես նաև տնօրինության աշխատանքներին աջակցելու համար, որպես հաստատության կառավարման մարմինների հաստատել սերտ համագործակցություն՝ ի շահ սովորողների կրթության, պատշաճ վարքի և վարվելակերպի ներդաշնակ ձևավորման ու զարգացման:

**** Ծանոթություն-****Կետերի սույն համարակալումը կարող է փոխվել և հղումները կատարել դպրոցի աշակերտական խորհրդի կանոնադրության համապատասխան կետերին:*

Որոշման օրինակելի նմուշ 2

Օրակարգում՝

1. Հաստատությունում ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների կատարման, առարկաների դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, կարգապահության բարելավման մասին *(զեկուցող՝ _____):*

Առաջնորդվելով կանոնադրության 40-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով
հաստատությունում ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների կատարման, առարկաների դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, կարգապահության բարելավման մասին՝
աշակերտական խորհուրդը
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատությունում ուսուցման, դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, կարգապահության բարելավման համար տնօրինության հետ համատեղ անցկացնել հետևյալ գործնական աշխատանքները.*

1) շարադրել աշխատանքի բովանդակությունը *(օրինակ, սովորողների գիտելիքների յուրացման որակի ուղղությամբ՝ տնային գրավոր և բանավոր ուսումնական*

հանձնարարությունների կատարման որակի կամ դժվար հասկանալի ուսումնական առաջադրանքների կոլեկտիվ կատարման ընթացքի հետազոտում և այլն):

2. Առաջարկել հաստատության տնօրենին.

1) ի գիտություն ընդունելու ընդունված սույն որոշումը, միաժամանակ՝ սովորողներին առնչվող ուսումնառության խնդիրները կարգավորելիս հաշվի առնել ընդունված որոշման դրույթները:

* **Ծանոթություն-** Որոշման 1-ին կետում գրված յուրաքանչյուր ուղղության գործնական աշխատանքների վերբերյալ գրել առանձին ենթակետ:

Որոշման օրինակելի նմուշ 3

Օրակարգում՝

1. Հաստատությունում սովորողների արտաուսումնական, արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ հաստատության կառավարման խորհրդին առաջարկություն ներկայացնելու մասին *(հաղորդող՝ _____):*

Ղեկավարվելով կանոնադրության 41-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով սովորողների արտաուսումնական, արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ հաստատության կառավարման խորհրդին առաջարկություն ներկայացնելու նպատակով՝ աշակերտական խորհուրդը
ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Հաստատությունում սովորողների արտաուսումնական, արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքների կազմակերպման համար դպրոցի կառավարման խորհրդին առաջարկել՝

1) շարադրել առաջարկության բովանդակությունը *(օրինակ, լրացուցիչ վճարովի ծառայությունից օգտվող հաստատությունում սովորող սոցիալապես անապահով աշակերտների նկատմամբ զեղչեր կիրառելու մասին, կամ սովորողների առողջության ու անվտանգության պահպանման միջոցառումների մասին և այլն):*

2. Հանձնարարել աշակերտական խորհրդի նախագահին՝ սույն որոշումը, սահմանված կարգի համաձայն ներկայացնելու հաստատության կառավարման խորհրդին:

* ***Ծանոթություն-****Մանկավարժական խորհրդին դիմելու դեպքում որոշման նախագիծը կազմվում է նույն կառուցվածքով՝ առաջարկության բովանդակության մեջ ներառելով անհրաժեշտ դրույթներ:*

Որոշման օրինակելի նմուշ 4

Օրակարգում՝

1. Հաստատությունում դասղեկների հետ համագործակցելու՝ նրանց աշխատանքային պլանով նախատեսված և դասարանական միջոցառումներն իրականացնելու մասին *(հաղորդող՝*
_____):

Հաստատությունում դասղեկների հետ համագործակցելու, նրանց աշխատանքային պլանով նախատեսված համադպրոցական և դասարանական միջոցառումներն ամիսներին իրականացնելու համար, ղեկավարվելով կանոնադրության 41-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, աշակերտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Հաստատությունում դասղեկների աշխատանքային պլանով նախատեսված համադպրոցական և դասարանական միջոցառումներն _____ ամիսներին իրականացնելու համար նրանց հետ համագործակցելու նպատակով հաստատել հետևյալ աշխատանքային պլանը.

1) շարադրել աշխատանքային պլանով նախատեսվող համագործակցության բովանդակությունը *(օրինակ, հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքային ծրագրով սահմանված համադպրոցական _____ միջոցառումների ընթացքում նպաստել սովորողների ինքնադրսևորմանը, կամ երաժշտական ունակություններ ունեցող սովորողների միջոցով օգնելու ……. դասարանի դասղեկին նախապատրաստելու համադպրոցական (կամ դասարանական) _____ միջոցառում և այլն):*

** **Ծանոթություն-** Սույն որոշման օրինակելի ձևը կարող է կիրառվել նաև դասարանական խորհրդի որոշման նախագծի համար:*

Որոշման օրինակելի նմուշ 5

Օրակարգում՝

1. Սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման մասին *(զեկուցող՝ _____):*

Հաստատության սովորողների հանգիստը և ժամանցը համադպրոցական տարեկան ծրագիր պլանով նախատեսված ժամանակացույցով կազմակերպելու համար, առաջնորդվելով կանոնադրության 40-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով, աշակերտական խորհուրդը
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համադպրոցական տարեկան ծրագիր պլանով նախատեսված հանգստի և ժամանցի միջոցառումների կազմակերպման ընթացքում աջակցել տնօրինությանը.

1) շարադրել անցկացվող միջոցառման անվանումը և աջակցության բովանդակությունը *(օրինակ՝ նպատակային էքսկուրսիաների, կամ թատերական, երաժշտական ներկայացումների, ասմունքի, պարի մրցույթների կազմակերպում, կամ համադպրոցական սպորտային մրցույթի անցկացում և այլն):*

Ուսումնական հաստատության սովորողներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու, տնօրինությանը աջակցելու նպատակով, առաջնորդվելով կանոնադրության 41-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով,
աշակերտական խորհուրդը
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Ծնողական խորհրդի հետ համատեղ կազմակերպել սեմինար պարապունքներ սովորողներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու նպատակով:

2. Հաստատության փորձառու ուսուցիչների հետ համատեղ սովորողների համար կազմակերպել իրավագիտական թեմաներով ընթերցումներ:

3. Խնդրել տնօրենին՝ գործող օրենսդրությանը համապատասխան՝ պայմաններ ստեղծել սովորողների իրավական գիտելիքների զարգացման համար, կազմակերպել հանդիպումներ իրավաբան մասնագետների, հայտնի իրավապաշտպանների հետ:

Որոշման օրինակելի նմուշ 6

Օրակարգում՝

1. □Ուսուցման բովանդակությունը, գիտելիքների յուրացման որակը□ հարցի վերաբերյալ դպրոցի մանկավարժական խորհրդում իրականացվող քննարկմանը մասնակցելու մասին *(հաղորդում՝ _____):*

Հաստատության մանկավարժական խորհրդում □Ուսուցման բովանդակությունը, գիտելիքների յուրացման որակը□ հարցի քննարկմանը մասնակցելու համար, առաջնորդվելով կանոնադրության 39-րդ կետի 1-ին և 7-րդ ենթակետերի պահանջներով,
աշակերտական խորհուրդը
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հավանություն տալ հաստատության մանկավարժական խորհրդում □Ուսուցման բովանդակությունը, գիտելիքների յուրացման որակը□ հարցի քննարկման մասին խորհրդի նախագահի կողմից ներկայացված զեկուցման նախագծին:*

2. Հաստատության մանկավարժական խորհրդում □Ուսուցման բովանդակությունը, գիտելիքների յուրացման որակը□ հարցի վերաբերյալ մանկավարժական խորհրդում քննարկմանը մասնակցելու և ելույթ ունենալու համար սահմանված կարգով լիազորել աշակերտական խորհրդի նախագահին:

3. Խնդրել հաստատության մանկավարժական խորհրդին հարցի քննարկման ընթացքում ձայն տրամադրել աշակերտական խորհրդին և խնդրո առարկա հարցի վերաբերյալ որոշում ընդունելիս հաշվի առնել աշակերտական ինքնավարության գործադիր մարմնի կողմից ներկայացվող առաջարկությունները:

** **Ծանոթություն-** Ծնողական խորհրդին դիմելու դեպքում որոշման նախագիծը կազմվում է նույն կառուցվածքով՝ առաջարկության բովանդակության մեջ ներառելով անհրաժեշտ դրույթներ:*

Որոշման օրինակելի նմուշ 7

Օրակարգում՝

1. Հաստատությունում մանկապատանեկան ակումբ ստեղծելու և նրա աշխատանքների կազմակերպմանը աջակցելու մասին *(հաղորդող՝_____):*

Ղեկավարվելով կանոնադրության 39-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, հաշվի առնելով դասարանական խորհուրդների կարծիքները, հաստատությունում ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման և ինքնադրսևորման, նրանց կարծիքի ազատ արտահայտման նպատակով մանկապատանեկան ակումբ ստեղծելու և նրա աշխատանքների կազմակերպմանն աջակցելու համար աշակերտական խորհուրդը
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Ստեղծել գրքասերների *(կամ բնապահպանների, կամ այլ անվանում)* մանկապատանեկան ակումբ:

2. Հաստատատել ակումբի գործունեության կանոնակարգը *(կանոնակարգը կցել սույն արձանագրությանը):*

3. Ակումբի նախագահ *(կամ պատասխանատու)* նշանակել _____ -ին:

4. Հանձնարարել դասարանական խորհուրդներին աջակցելու նորաստեղծ ակումբի աշխատանքներին:

5. Խնդրել տնօրինությանը ակումբի գործունեության համար հատկացնել համապատասխան տարածք և անհրաժեշտ գույք:

Որոշման օրինակելի նմուշ 8

Օրակարգում՝

1. Հաստատությունում մասնագիտացված հանձնախմբերի կազմավորան մասին *(զեկուցող՝ _____):*

Ղեկավարվելով կանոնադրության 36, 37 և 38-րդ կետերի պահանջներով, հաստատությունում սովորողների իրավունքների և ազատությունների, կրթության, ինքնակրթության, համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանն օժանդակելու, ինչպես նաև առողջության, կյանքի անվտանգության, սոցիալական ապահովության նպատակով հաստատությունում մասնագիտացված հանձնախմբերի կազմավորման և նրանց աշխատանքների կազմակերպմանն աջակցելու համար աշակերտական խորհուրդը
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Կազմավորել հետևյալ մասնագիտացված հանձնախմբերը.
1) լրացնել հանձնախմբի անվանումը *(օրինակ՝ մշակութային, կամ իրավական, կամ տեղեկատվական):*

2. Հաստատատել մասնագիտացված հանձնախմբերի գործունության կանոնակարգը (կցվում է սույն արձանագրությանը):

3. Մասնագիտացված հանձնախմբերի համակարգողներ նշանակել.
1) ազգանունը, անունը, հայրանունը *(_____ դասարանը, կամ զբաղեցրած պաշտոնը, կամ այլ կարգավիճակը):*

4. Հանձնարարել դասարանական խորհուրդներին աջակցելու նորաստեղծ մասնագիտացված հանձնախմբերի աշխատանքներին:

5. Խնդրել տնօրինությանը մասնագիտացված հանձնախմբերի գործունեության համար հատկացնել համապատասխան պայմաններ *(ըստ անհրաժեշտության՝ նաև նյութական միջոցներ, տարածքներ ու գույք):*

Որոշման օրինակելի նմուշ 9

Օրակարգում՝

1. Համայնքին օժանդակող _____ ծրագրի շրջանակներում համագործակցության մասին (զեկուցող՝ _____):

Հաշվի առնելով համայնքի աշխատակազմի և հաստատության միջև ձևավորված

համագործակցության ավանդույթը, ղեկավարվելով կանոնադրության 39-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով՝ համայնքին օժանդակող _____ ծրագրի շրջանակներում համագործակցելու համար աշակերտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Համայնքին օժանդակող _____ ծրագրի շրջանակներում կազմակերպել հետևյալ միջոցառումները.

1) շարադրել նախատեսվող միջոցառումների հիմնական բովանդակությունը *(օրինակ, _____ ծրագրի ավարտից հետո անցկացվող բարեկարգման աշխատանքներին, կամ նախատեսված շաբաթօրյակներին, կամ համայնքային նշանակության բարեգործական հիմնադրամին աջակցելը, կամ համայնքի կողմից անցկացվող կրթամշակութային ծրագրերին մասնակցելը և այլն):*

2. Խնդրել հաստատության տնօրինությանը ստեղծելու համապատասխան պայմաններ՝ համայնքային նշանակության _____ ծրագրին սույն որոշումով ընդունված օժանդակությունը (կամ համագործակցությունը) իրագործելու (կամ իրականացնելու) համար:

**** Ծանոթություն-** Սույն որոշման ամբողջական տեքստը փակցվում է հասատատության տեղեկատվական անկյունում և անհրաժեշտության դեպքում հրապարակվում է զանգվածային լրատվական միջոցներում:*